ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2118-Ա « 27 » մայիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
14-Ի Հ.1868-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով.

1.Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 14-ի «Երևան քաղաքի Նոր Նորք, Մալաթիա-Սեբաստիա, Աջափնյակ, Շենգավիթ, Էրեբունի, Նուբարաշեն, Ավան, Նորք-Մարաշ վարչական շրջանների մի շարք փողոցներում հասարակական տրանսպորտի նոր կանգառատեղեր սահմանելու և հին կանգառները վերականգնելու մասին» հ.1868-Ա որոշման հ.2 հավելվածի մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) 10-րդ տողը լրացնել նոր պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ.

- «Թևոսյան փողոց, հ.9/2 հասցեի հարակից ճանապարհահատված,

Թևոսյան փողոց, հ.44/3 հասցեի հարակից ճանապարհահատված»,

2) 17-րդ տողը լրացնել նոր պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ.

-«Շոպրոնի փողոց, հ.4 հասցեի հարակից և հանդիպակաց ճանապարհահատված»,

3) ցանկը լրացնել նոր՝ 20-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ.

«20. Սամվել Սաֆարյան փողոց.

- Ս.Սաֆարյան փողոց, հ.11/1 հասցեի հարակից ճանապարհահատված»:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի ու ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

3.Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Ս.Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ